ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

## 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

## DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
## Challenges and Opportunities of 21st Century

## РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
## вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

*Հրատարակվում է*
*ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհրդի նախագահ՝***

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

***Խմբագրական խորհուրդ՝***

**ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
**ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և**
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

# ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

*Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,*

*շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:*

*Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:*

*Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:*

*Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:*

*Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:*

*Շնորհակալ եմ ուշադրության համար:*

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր*

**ARTSRUNI TOROSYAN**

## THE DYNAMICS AND POLARIZATION TENDENCY OF MONETARY INCOMES OF THE POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA

***Key words:*** *incomes, population, household, polarization, transfer, structure, poverty*

*The effect of the dynamics of monetary incomes of the population in the Republic of Armenia on the lamination of their incomes is considered in the article.*

*On the basis of statistical data of 2005–2015 the changes of population's income structure are analyzed. As a result the growth of specific weight in the gross incomes of the population is revealed. This proves the positive results of the formation of trade relations in the Republic.*

*However, the analysis of the structure of monetary incomes of households by decile groups has permitted to come to a conclusion that the source of increasing the living standards of the middle layer of the Republic's population has been labor incomes.*

*On the other hand, the above mentioned processes have led to the polarization of population into the reach and the poor.*

**ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

***Հիմնաբառեր.*** *սոցիալական քաղաքականություն, սոցիալական ինովացիաներ, սոցիալական գործընկերություն, անհավասարություն, խոցելի խմբեր, անապահով խավ*

*Ներկայացվել են սոցիալական քաղաքականության միջոցառումների իրականացման ժամանակակից առանձնահատկությունները: Քննարկվել են սոցիալական բարեփոխումների նոր ուղղությունների որոնման և սոցիալական ինովացիաների կիրառման կարևորությունն ու հնարավորությունները: Մեկնաբանվել են սոցիալական գործընթացների որոշ առանձնահատկություններ ՀՀ-ում: Հիմնավորվել է սոցիալական ինովացիաների ուսումնասիրության նոր մեթոդների բացահայտման անհրաժեշտությունը և ներկայացվել է սոցիալական ինովացիաների նոր մեկնաբանություն:*

Սոցիալական քաղաքականության միջոցառումները հաճախ կրում են կարճատև բնույթ, որովհետև, հասարակական զարգացմանը զուգահեռ, մարդու կողմից բացահայտվում են նոր սոցիալական մարտահրավերներ, իսկ ամրագրվող վարքագծի համընդհանուր կանոնները ժամանակի ընթացքում արդյունավետորեն չեն գործում այդ նույն

մարդկանց և հասարակության համար: Առաջացած նոր իրողությունների պայմաններում պետական նախաձեռնությունները, ինովացիոն ծրագրերի ներդրումը դառնում են պետական գերակա ուղղություններ, իսկ օրենսդրությունը՝ կարգավորիչ միջոց: Սոցիալական համակարգի հիմնական շահառուներն անապահով և խոցելի խմբին պատկանող անձինք են, որոնց սոցիալական կայունացման համար պահանջվում են ավելի ճկուն և նուրբ մոտեցումներ: Զուտ գործնական վերլուծությունը կամ համակարգի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունը բավարար չէ, որովհետև առկա մեթոդները և մոտեցումները զարգացման և համակարգային բարեփոխումների փուլում են: Սոցիալական համակարգի տեսամեթոդական և գիտական վերլուծության անհրաժեշտություն է առաջանում, որը հիմնված կլինի միջազգային փորձի ուսումնասիրության վրա և հնարավորություն կտա ամբողջացնելու գիտական ուսումնասիրությունն ու գործնական փորձը, ստեղծված արդյունքները կիրառելու ինովացիոն մեթոդներով՝ հասարակության և սոցիալական միջավայրում տեղի ունեցող երևույթների հետազոտման ընթացքում:

Միասին աշխատելով՝ մարդիկ ստեղծում են ավելին, քան անհատական ջանքերի արդյունքում: Ինովացիոն ձեռնարկությունները կենտրոնացնում ու վերամշակում են գիտելիքները, և ձեռնարկատիրոջ իրական ուժը պայմանավորված է նոր շուկաների հայտնաբերմամբ, ապրանքների արտադրմամբ և արտադրության նոր միջոցների բացահայտմամբ: Նման արտադրությունը Ջոն Ա. Հոբսոնը կոչում էր «առաջադիմական արտադրություն»[1]:

Ժամանակակից պայմաններում գերակա դիրք է զբաղեցնում գիտելիքը՝ դառնալով հիմնարար արժեք ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական գործընթացների կառավարելիության սահմանների ընդարձակման համար:

Արևմտյան գիտնականների կարծիքով կազմակերպությունների մտավոր ռեսուրսների կտրուկ աճ է նկատվում նյութական և ֆինանսական կապիտալների միջև: Դրանց հարաբերակցությունը տատանվում է 5:1 և 6:1 միջև[2]: 2016 թ. հրապարակված տվյալների համաձայն՝ ՀՀ տարածքում գործում են 70 կազմակերպություն, գիտության և ինովացիաների ոլորտի տարբեր ենթակառուցվածքային բաղադրիչներ[3], որոնք իրենց գործունեության շրջանակներում իրականացնում են գիտատեխնիկական աշխատանքներ, ու հենց դրանք էլ հիմնականում ստեղծում են գիտական միջավայր ու նախանշում սոցիալական ինովացիաներ: ՀՀ սոցիալական ոլորտում կիրառվող ծրագրերի զգալի մասը հիմնականում իրավակիրառական հիմնավորում չունի, իսկ ցանկացած նմանատիպ ծրագիր կամ գործունեություն շարունակում է զգալի խոչընդոտների հանդիպել, որի հետևանքով տեղի են ունենում ինովացիոն գործընթացների նվազում և գիտական ներուժի արտահոսք:

---

[1] Ջոն Ա. Հոբսոնի կարծիքը մեջբերված է հետևյալ աղբյուրից՝ John Cunningham Wood, «John Stuart Mill: Critical Assessments, Том 4 John Stuart Mill: Critical Assessments, John Cunningham Wood, ISBN 0415065720, 9780415065726 Routledge critical assessments of leading economists», Taylor & Francis, 1991, p. 7–12.

[2] Михнева С.Г., «Интеллектуализация экономики» N 1 Инновации, 2003.

[3] http://www.armstat.am/am/?nid=45&year=2016

Կապված այն հանգամանքի հետ, որ սոցիալական ուղղվածության սուբյեկտները ստիպված են անընդհատ հարմարվել տեղի ունեցող փոփոխություններին, սոցիալական ինովացիաների ուղղությամբ նոր միջոցների կիրառումն արդյունավետ գործիքակազմ է ենթադրում, որոնք կարող է լինել ավանդական մեթոդների զարգացման կամ արմատապես այլ մոտեցումների որոնման արդյունք: Սոցիալական ինովացիոն տեխնոլոգիաները ներկայացնում են ինովացիոն գործունեության միջոցներ, որոնք ուղղված են այնպիսի ինովացիաների ստեղծմանն ու նյութականացմանը, որոնք առաջացնում են սոցիալական համակարգի որակական փոփոխություններ: Զարգացած երկրներում սոցիալական համակարգում առաջացած ճգնաժամային խնդիրները լուծվում են ինովացիոն մեթոդաբանության սահմաններում մշակված տարբեր եղանակների օգտագործմամբ, որոնք սկզբունքորեն ուղղորդված են դեպի սոցիալական ծառայությունների և դրանց մատուցման նոր տեխնոլոգիաների որոնումն ու շրջանառումը:

*Աղյուսակ 1*

***Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում*** [1]

| | *Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում (% մարզի բնակչության թվում)* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *Հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ երեխաներ* | *Ծնողազուրկ երեխաներ* | *Միայնակ ծերեր* | *Գործազուրկներ* | *Տարեցներ* | *Բազմազավակ ընտանիքներ* | *Փախստականներ* | *Նպաստառուներ* | *Խոցելիության հիմքով* |
| ք. Երևան | 4.4 | 2.1 | 9.8 | 25.0 | 12.9 | 4.9 | 4.6 | 9.2 | 31.7 |
| Արագածոտն | 3.7 | 3.1 | 9.8 | 16.9 | 12.0 | 20.2 | 5.1 | 17.5 | 34.2 |
| Կոտայք | 2.6 | 1.7 | 6.2 | 37.1 | 8.8 | 14.8 | 11.0 | 13.7 | 38.1 |
| Տավուշ | 6.9 | 5.1 | 16.2 | 27.8 | 15.7 | 8.0 | 7.4 | 21.2 | 45.6 |
| Լոռի | 5.1 | 3.9 | 9.6 | 19.1 | 11.6 | 9.0 | 5.8 | 29.4 | 35.5 |
| Շիրակ | 4.2 | 4.8 | 13.2 | 18.2 | 11.8 | 8.2 | 1.3 | 35.9 | 36.6 |
| Արարատ | 3.4 | 3.1 | 7.8 | 14.9 | 13.1 | 12.6 | 17.0 | 12.4 | 31.8 |
| Արմավիր | 2.9 | 2.8 | 9.6 | 18.3 | 10.5 | 13.8 | 8.6 | 9.1 | 30.5 |
| Սյունիք | 5.5 | 5.2 | 13.2 | 19.7 | 12.6 | 9.6 | 9.0 | 14.5 | 37.5 |
| Վայոց Ձոր | 5.6 | 2.5 | 7.2 | 21.9 | 13.3 | 13.2 | 7.0 | 19.0 | 35.6 |
| Գեղարքունիք | 4.0 | 1.4 | 8.4 | 37.3 | 12.0 | 21.4 | 11.0 | 23.3 | 45.5 |
| Ընդամենը՝ ՀՀ-ում | 4.2 | 3.2 | 10.1 | 24.2 | 12.2 | 12.3 | 7.2 | 17.3 | 36.6 |

ՀՀ-ում աղքատության և սոցիալական անհավասարության առկա դինամիկան վկայում է, որ տնտեսությունում սոցիալական քաղաքականությունն անհրաժեշտ է նպատակաուղղել այնպիսի սոցիալական ինովացիաների կիրառմանը, որոնք կարող են նպաստել խոցելի խմբերի եկամուտների աճին և, այս մեխանիզմով, աղքատության ու սոցիալական անհավասարության կրճատմանը: Սոցիալական ոլորտի ներուժի, սոցիալական կայունու-

[1] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1459.pdf [10.05.2015 թ. դրությամբ]:

թյան տեսանկյունից և խոցելի խմբերի ներկայացվածության ցուցանիշի կրճատման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ինովացիոն սոցիալական քաղաքականություն:

Աղքատության հաղթահարման քաղաքականությունը կենտրոնացվում է տնտեսական զարգացման ուղղությամբ՝ նպատակ ունենալով բարձրացնելու բնակչության խոցելի խմբերի կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության մակարդակը, ինչպես նաև բարելավելու իրավիճակն աշխատաշուկայում: Այդպիսով՝ հնարավոր կլինի պայքարել սոցիալական անապահովության և անհավասարության դեմ:

Վերջին տարիներին կառավարության քաղաքականությունն ուղղված է բնակչության անապահով խավին սոցիալական ծառայությունների տրամադրմանը, դրանց ծավալների մեծացմանը, հասցեականությանը, մատչելիությանը, արդյունավետության և որակի բարելավմանը, զբաղվածության ապահովմանը՝ այդ գործընթացում ընդգրկելով նաև մասնավոր հատվածը: Արևմուտքի զարգացած երկրներում գործընկերության կիրառման արդյունքում պետությանը հաջողվում է կարգավորել և լուծել սոցիալական մի շարք հիմնախնդիրներ՝ հենվելով ոչ միայն պետական ապարատի և պետբյուջեի միջոցների, այլև հավասարության ու բարեգործության վրա: Սոցիալական գործընկերությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ նորարարական ձև է և սերտորեն փոխկապակցված է կառավարության գործառույթների հետ: Սոցիալական գործընկերության և հասարակական հիմնախնդիրների լուծման տեսանկյունից, պետական և մասնավոր հատվածի մասնակցության ու պատրաստակամության շնորհիվ, անհրաժեշտ է փորձել և մասնակցել որոշակի աշխատանքների կամ նպաստել ինովացիոն ծրագրերի աջակցմանը, հաճախ՝ անվարձահատույց, կամավոր սկզբունքներով և հիմունքներով կամ սկզբնական շրջանում՝ ցածր վարձատրությամբ: Սոցիալական գործընկերության մաս է նաև համապատասխան քաղաքականության սուբյեկտների այնպիսի հարաբերությունը, որի ընթացքում յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում գործունեության իրականացմամբ ստանալու ակնկալվող արդյունքը: Այստեղ շահերի համաձայնեցումն իրականացվում է բանակցային գործընթացի շնորհիվ, որի ընթացքում կողմերը փոխհամաձայնության են գալիս աշխատանքի պայմանների, աշխատողներին սոցիալական երաշխիքների, կազմակերպության և ոլորտին վերաբերող այլ հարցերի շուրջ: Ներկայումս ՀՀ կառավարությունն իրականացնում է սոցիալական համակարգի տարբեր բարեփոխումներ: Սոցիալական ոլորտի ինովացիաներից են նաև սոցիալական կացարանները, ծերապարտեզները, սոցիալական ձեռնարկությունները, այլընտրանքային վճարովի տուն–ինտերնատները և այլն: ՀՀ ազգային ինովացիոն համակարգի մեկնարկի հիմնական նպատակը ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումն է:

Սոցիալական ոլորտում ինովացիաների կիրառման խնդիրներն ավելի երկարաժամկետ լուծումներ են պահանջում, դրանց արդյունքներն արագորեն չեն արտահայտվում և չունեն որոշակի ժամկետայնություն, ինչպես որ շատ հաճախ լինում է նյութատեխնիկական ինովացիաների կիրառման ժամանակ[1]:

---

[1] Хотяшева О.М., Инновационный менеджмент, учебное пособие, Санкт-Петербург, изд. дом "Питер", 2006, с. 59–67.

Վերը բերված դրույթներից ելնելով՝ առաջարկում ենք սոցիալական ոլորտի ինովացիաների առավել ընդգրկուն մեկնաբանում: Սոցիալական ինովացիան ավանդական մտածողության, մոտեցումների և գոյություն ունեցող կենսակերպի փոփոխություն է, որը մարմնավորվել է սոցիալական բնույթի ծառայությունների նկատմամբ նոր մոտեցման տեսքով և ընթանում է կյանքի որակի բարձրացման ու փոփոխվող պայմանների միտումներով՝ նպատակ հետապնդելով իրականացնելու մարդկային կապիտալի զգալի որակական տեղաշարժեր և ապահովելու արդյունավետ վերափոխումներ սոցիալական համակարգում:

**ЦОВИНАР КАРАПЕТЯН**

## НЕОБХОДИМОСТЬ ИННОВАЦИОННОЙ НАПРАВЛЕННОСТИ СОЦИАЛЬНОЙ ПОЛИТИКИ

***Ключевые слова:*** *социальная политика, социальные инновации, социальное партнерство, неравенство, уязвимые группы, уязвимый класс*

*Представлены современные особенности реализации мер социальной политики. Обсуждались важность и возможности поиска новых путей социальной реформы и применения социальных инноваций. Прокомментированы некоторые особенности социальных процессов в Армении. Обоснована необходимость новых методов исследования социальных инноваций и представлена новая интерпретация социальных инноваций.*

**TSOVINAR KARAPETYAN**

## NECESSITY OF INNOVATIVE DIRECTION OF SOCIAL POLICY

***Key words:*** *social policy, social innovations, social partnership inequality, vulnerability groups, vulnerable groups*

*Modern features of the implementation of social policy measures has been presented. The importance and possibilities of searching for new ways of social reform and application of social innovations were discussed. Some features of social processes in Armenia are commented on. The necessity of new methods for researching social innovations is grounded and a new interpretation of social innovations is presented.*